# «ՀԱՅՈՒ ՈԳԻ»
# ՄՐՑԱՆԱԿԱՔԱՇԽՈՒԹՅՈՒՆ



Արվեստի միջազգային մրցույթ
Հայերի ընդունման վերջնաժամկետ՝ 31.03.15

ԱՇԽԱՐՀԱՍՓՅՈՒՌ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նարեկացի Արվեստի Միությունը
ներկայացնում է

# «ՀԱՅՈՒ ՈԳԻ»
# ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

## Ճշմարտության ներկայացումը տաղանդի միջոցով

Օսմանյան Թուրքիայի կողմից 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունից հարյուր տարի անց, հայի ազգային ոգին դեռ կենդանի է և տոկուն: Վերապրածները և նրանց ժառանգները վեր են հառնել փյունիկի նման՝ բարձունքներ նվաճելու համար:

Նրանք դրել են ինքնատիպության ու ինքնարտահայտման իրենց կնիքը ստեղծագործական և գիտական բոլոր նախաձեռնություններում՝ ի շահ հայ ազգի և աշխարհի:

Այդ կենսունակ ուժը՝ Հայու Ոգին վառ պահելու և ոգևորելու նպատակով, Նարեկացի Արվեստի Միությունը (ՆԱՄ) սահմանել է «ՀԱՅՈՒ ՈԳԻ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ, որն իրենից ներկայացնում է ստեղծագործական միջազգային մրցույթ և նախատեսված է հայ տաղանդների նոր սերնդին բացահայտելու և խրախուսելու համար:

Եկել է նրանց ժամանակը հայկական մշակութային ժառանգությունը հայկական թեմաներով թարմ աշխատանքներով հարստացնելու համար:

## Մրցույթի մասին

Այս տարվա մրցույթը նվիրված է Ցեղասպանության հարյուրամյակին և կրում է «ԱրԴար» խորագիրը:

«ԱրԴար» անվանումը կազմված է հայերեն ԱՐԱՐԵԼ և ԴԱՐ բառերից, այսինքն ԱՐԴԱՐ-ը նշանակում է «արարման դար»:

Մասնակիցները կարող են ընտրել մեկ կամ մեկից ավելի հետևյալ թեմաները՝

- «Հարգանք զոհերի հիշատակին»
- «Վերածնունդ»
- «Ճշմարտություն և արդարություն»
- «Երկիր հայրենի»
- «Ցեղասպանության ճանաչում և կանխում»

**Մասնակցել կարող են**

14-24 տարեկան հայազգի կամ հայկական արմատներ ունեցող երիտասարդները Հայաստանից և Սփյուռքից:

**Արվեստի ճյուղերը**

Կերպարվեստ, գրական ստեղծագործություն, երաժշտություն և կատարողական արվեստ (մանրամասների համար տես ստորև ներկայացված ցուցանիշների բաժինը)

**Մրցանակներ**

Կշնորհվեն առաջին, երկրորդ, երրորդ կարգի մրցանակներ, ինչպես նաև հատուկ մրցանակներ՝ յուրաքանչյուր կատեգորիայում: Որպես բարձրագույն գնահատական հաղթողներին կշնորհվի "ՀԱՅՈՒ ՈԳԻ" ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ պատվո գավաթը:

**Ժյուրին**

Աշխարհի տարբեր երկրների հայ և այլազգի ներկայացուցիչներից կազմված մրցավարների խումբը կքննի արվեստի տարբեր ճյուղերում ներկայացված աշխատանքները և կորոշի հաղթողներին:

**Հայտարարություն**

Հաղթողների անունները կհրապարակվեն 2015թ. ապրիլի 12-ին համաշխարհային հայկական լրատվամիջոցներով, կլուսաբանվեն տարբեր մամլո հաղորդագրություններում և «ՀԱՅՈՒ ՈԳԻ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ստեղծագործական միջազգային մրցույթին առնչվող այլ թվային և տպագիր տեքստերում:

Ապրիլի 25-ին կկայանա հատուկ մրցանակների շնորհման արարողություն, անցկացման վայրը կհայտարարվի ապրիլին, ամենայն հավանականությամբ այն կլինի Երևան քաղաքում՝ Նարեկացի Արվեստի Միության մասնաճյուղում կամ որևէ այլ հարմար սրահում:

**Աշխատանքները կներկայացվեն**

Հաղթող ճանաչված ստեղծագործությունները կներկայացվեն ՆԱՄ հիմնական կայքում՝ www.naregatsi.org , www.armenianspiritawards.org, Facebook և Twitter սոցիալական ցանցերում:

Լավագույն ստեղծագործությունները 2015 թ. ապրիլի 24-ից մայիսի 25-ը կներկայացվեն Երևանում՝ Նարեկացի Արվեստի Միության սրահում կայանալիք միջոցառումների շարքում:
Լրացուցիչ տեղեկություն կտրվի ավելի ուշ:

# Ներկայացման ցուցանիշները ըստ կատեգորիաների

## Կերպարվեստ

| Գեղարվեստ Նկարչություն/ Գրաֆիկա | Գեղարվեստ Միքստ մեդիա (Mixed Media) | Քանդակ | Վիդեո/Ֆիլմ/ Անիմացիա | Գրաֆիկական դիզայն կամ անիմացիոն Գրաֆիկա | Լուսանկար |
|---|---|---|---|---|---|
| Նվազ./մաքս. չափսերը՝ 12 x 18 36 x 42 | Նվազ./մաքս. չափսերը՝ 12 x 18 36 x 42 Ներկ. բարձր որակով | Նվազ./մաքս. չափսերը՝ 18 x 24 36 x 42 Ներկ. բարձր որակովjpg Ցանկացած նյութ չպետք է գերազանցի 20 lbs. | Նվազ./մաքս. տևողությունը՝ 30 վայրկյան :120 վայրկյան | Նվազ./մաքս. չափսերը՝ 8 x 10 24 x 32 Ներկ. բարձր որակով Jpg | Նվազ./մաքս. չափսերը՝ 8 x 10 18 x 24<br><br>(մեկ պատկեր կամ ֆոտո պատմվածք ոչ ավելի, քան 5 պատկերով) |
| Ներկ. բարձր որակով | Ներկ. բարձր որակով Jpg կամ PDF | Ներկ. բարձր որակով jpg | Ներկ. բարձր որակով աուդիո/վիդեո ֆորմատով | Ներկ. բարձր որակով jpg կամ PDF | Ներկ. բարձր որակով jpg կամ PDF |

## Գրականություն

| Կարճ պատմվածք | Կարճ ոչ-գեղարվեստական գործ | Էսսե/հոդված | Սցենար – թատրոն/կինո | Բանաստեղծություն |
|---|---|---|---|---|
| Առավել.՝10 էջ, միակող-մանի, տողերի միջև երկակի տարած., 12 pt. տիպի<br><br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն կամ ռուսերեն | Առավել.՝ 10 էջ, միակողմանի, տողերի միջև երկակի տարած., 12 pt. տիպի<br><br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն կամ ռուսերեն | Առավել.՝ 3 էջ, միակողմանի, տողերի միջև երկակի տարած., 12 pt. տիպի<br><br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն կամ ռուսերեն | Մեկ գործող.; Առավել.՝ 20 էջ, միակողմանի, տողերի միջև երկակի տարած., 12 pt. տիպի<br><br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն կամ ռուսերեն | Առավել.՝ 3էջ, միակողմանի, տողերի միջև երկակի տարած., 12 pt. տիպի<br><br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն կամ ռուսերեն |

## Երաժշտություն

| Կոմպոզիցիա | Քնարերգություն (վոկալ ստեղծագործության խոսքեր) | Կոմպոզիցիա և քնարերգություն |
|---|---|---|
| Բոլոր ժանրերը<br>• Գործիքային<br>• Սիմֆոնիկ<br>• Երաժշտական թատրոն<br>• Սոլո Գործիք<br><br>Նվազ. 2 րոպե<br>Առավել.՝ 5 րոպե | Բոլոր ժանրերը<br>• Մեներգ<br>• Խմբերգային<br><br>Նվազ. 2 րոպե<br>Առավել.՝ 5 րոպե<br>Անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն | Բոլոր ժանրերը<br>• Մեներգ<br>• Խմբերգային<br>• Երաժշտական թատրոն<br><br>Նվազ. 2 րոպե<br>Առավել.՝ 5 րոպե |

### Կատարողական արվեստ

| Պար |
|---|
| Հեղինակային պար հեղինակային կամ արդեն գոյություն ունեցող երաժշտության հիման վրա<br><br>Բոլոր ժանրերը<br><br>Մենակատարում<br>Խմբային<br>Նվազ. 2 րոպե<br>Առավել.՝ 5 րոպե |

## Մասնակցության հայտերի ընդունման կարգը

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ մինչև 2015 թ. մարտի 31-ը, երեքշաբթի:
Հաղթողները կտեղեկացվեն 2015 թ. ապրիլի 12-ին, չորեքշաբթի:

• **Պաշտոնական մասնակցության հայտի ներկայացում**
Բոլոր ստեղծագործական աշխատանքներին կից պետք է ներկայացվի պաշտոնական հայտը, որը կարող եք ներբեռնել Նարեկացի Արվեստի Միության կայքէջից՝ www.naregatsi.org / www.armenianspiritawards.org կամ ՆԱՄ-ի ֆեյսբուքյան /Facebook/ էջից: Մասնակցության հայտերը առկա են անգլերեն և հայերեն լեզուներով:

• **Էլ.-փոստով ուղարկելու դեպքում՝** contact@armenianspiritawards.org հասցեով հայտին կից ներկայացնել աշխատանքը՝ ֆոտո, տեսագրություն, ձայնագրություն կամ տեքստային ֆայլ ֆորմատներով՝ մաքսիմալ ընթեռնելի բարձր որակով կամ ինտերնետային հասցեն, ուր կարելի է տեսնել աշխատանքը:

•**Փոստով ուղարկելու դեպքում**
Հայտին կից Նարեկացի Արվեստի Միություն ուղարկել աշխատանքը DVD կամ տպագիր ֆորմատով հետևյալ հասցեով՝ Երևան 0010, Վարդանանց 16/1:

## Խնդրում ենք նկատի ունենալ, որ

• Նույն անձը կարող է մասնակցության հայտ ներկայացնել և մասնակցել ծրագրի տարբեր ճյուղերում օգտագործելով նույն հայտը: Մեկ հայտ մեկ կատեգորիայի համար:

• Հաղթողները պետք է հոգան իրենց աշխատանքները Հայաստան տեղափոխելու հետ կապված ծախսերը: Եվ նաև պետք է հոգան ճամփորդության հետ կապված բոլոր ծախսերը, եթե ցանկանան անձամբ ներկա գտնվել «ՀԱՅՈՒ ՈԳԻ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ մրցանակների շնորհման հանդիսավոր արարողությանը Հայաստանում:

• Աշխատանքները հաղթողներին կվերադարձվեն «ՀԱՅՈՒ ՈԳԻ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ավարտից հետո:

Լրացուցիչ տեղեկությունների և հարցերի համար խնդրում ենք դիմել՝

### Երևան՝

Բջջային հեռ.՝ 093-332888
Հեռ. ՝ 011-201020
Էլ. փոստ՝
contact@armenianspiritawards.org
info@naregatsi.org
Նարեկացի Արվեստի Միություն
Հասցե՝ Երևան 0010, Վարդանանց 16/1

### Շուշի՝

Հեռ.՝ (374 477) 31466
Էլ. փոստ՝
contact@armenianspiritawards.org
info@naregatsi.org
Նարեկացի Արվեստի Միություն
Հասցե՝ Մուրացանի 6, Շուշի, Արցախ

### ԱՄՆ՝

Հեռ.՝ 201-328-7625
Էլ. փոստ՝
contact@armenianspiritawards.org
info@naregatsi.org
Նարեկացի Արվեստի Միություն
Հասցե՝ 333 S. Van Brunt Street Englewood NJ 07631

Նարեկացի Արվեստի Միություն

«ՀԱՅՈՒ ՈԳԻ»
ՄՐՑԱՆԱԿԱՐԲԱՃԽՈՒԹՅՈՒՆ

# Արվեստի միջազգային մրցույթ

Մասնակցության հայտ

| 1. Ընդհանուր տեղեկություն | |
|---|---|
| Ազգանուն | |
| Անուն | |
| Ծննդյան ամսաթիվ | |
| Հասցե | |
| Հեռ. համար, բջջային | |
| Էլ. փոստի հասցե | |
| **2. Տեղեկություն ուսումնական հաստատության մասին** | |
| Անվանում | |
| Քաղաք և նահանգ | |
| Հեռ. համար/ Ֆաքս | |
| Կայքէջ (առկայության դեպքում) | |
| Դասարան / Կուրս<br>☐ դպրոց<br>☐ քոլեջ/ համալսարան<br>☐ բակալավրիատ<br>☐ մագիստրատուրա | |
| **3. Տեղեկություն** | |
| ☐ երաժշտական կոմպոզիցիա<br>☐ կերպարվեստ<br>☐ գրական ստեղծագործություն<br>☐ ներկայացում | |
| Ներկայացված աշխատանքի անվանումը | |
| Աշխատանքի նկարագիր (նյութ, չափ, կատարում) | |